



«Այբ կրթական հանգույց» հիմնադրամ
Երևան 0052, Թբիլիսյան խճ. 11/11
Հեռ.՝ +374 60 500 456, +374 94 546 498
welcome@aybschool.am
www.aybschool.am

<p>Արձանագրություն № ASBT05-2103-C (2502) «Այբ կրթական հանգույց» հիմնադրամի 5-րդ գումարման հոգաբարձուների խորհրդի նիստի</p>	
Ամսաթիվ՝	25 փետրվարի 2021 թ.
Անցկացման վայր՝	Zoom հարթակ
Նիստի սկիզբ՝	09:30
<p>ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ Հոգաբարձուների խորհրդի (ՀԽ) անդամներ՝ Ռուբեն Հարությունյան - ՀԽ նախագահ, Անահիտ Ադամյան, Անահիտ Հովհաննիսյան, Արիս Բերբերյան, Արթուր Ալավերդյան, Հովհաննես Աթաբեկյան, Սարգիս Բադալյան, Հակոբ Հակոբյան, Վասկեն Յակուբյան:</p> <p>Նիստին չի մասնակցել՝ Տիգրան Հարությունյան:</p>	
<p>Նիստին մասնակցել են հոգաբարձուների խորհրդի ինն անդամներ, ինչն ապահովում է որոշումների կայացման համար անհրաժեշտ քվորումը:</p> <p>Առանց ձայնի իրավունքի նիստին մասնակցում էին. Դավիթ Սահակյան (գործադիր տնօրեն), Նիստի քարտուղար ընտրվեց Սիրանուշ Սուքիասյանը:</p>	
<p>Հարց 1. Օրակարգի հաստատում Որոշում հարց 1 <i>Հաստատել ՀԽ-ի նիստի 2021 թվականի փետրվարի 25-ի օրակարգը:</i> Որոշումը կայացված է միաձայն:</p>	
<p>Հարց 2. «Մեկ Ձայն» անկախ դպրոցների հայկական ասոցիացիա հասարակական կազմակերպությունում որպես «Այբ» դպրոցի լիազոր ներկայացուցիչ նաև Արամ Փախչանյանի թեկնածության հաստատում:</p>	

<p>Որոշում հարց 2 <i>Որոշվեց հաստատել «Մեկ Ձայն» անկախ դպրոցների հայկական ասոցիացիա հասարակական կազմակերպությունում որպես «Այբ» դպրոցի լիազոր ներկայացուցիչ նաև Արամ Փախչանյանի թեկնածությունը:</i></p> <p>Որոշումը կայացված է միաձայն:</p>
<p>Հարց 3. Ընդունելության կարգի կետերից մեկի փոփոխություն դիմորդի ծնողի առաջարկությամբ:</p>
<p>Որոշում հարց 3 <i>Որոշվեց Ընդունելության կարգում կատարել հետևյալ փոփոխությունը՝ 5.5.4.3 կետի վերջում լրացում անել «...Անգլերենի ստուգաթեստին կարող են չմասնակցել նաև այն դիմորդները, ովքեր ավագ դպրոցի ընդունելությանը նախորդող առավազն վերջին 24 ամիսների ընթացքում ուսանել են անգլալեզու դպրոցում և բոլոր առարկաներն ուսումնասիրել են անգլերեն լեզվով: Դիմորդները պետք է ներկայացնեն այս փաստը հավաստող որևէ հիմք:»</i></p> <p>Որոշումը կայացված է միաձայն: Հարցի քննարկմանը և քվեարկմանը չի մասնակցել Անահիտ Ադամյանը:</p>
<p>Հարց 4 Նախորդ նիստից անցած ժամանակահատվածում դպրոցի աշխատանքների մասին հակիրճ տեղեկություններ</p>
<p>Որոշում հարց 4 <i>Որոշվեց ի գիտություն ընդունել Դավիթ Սահակյանի ներկայացրած հաշվետվությունը:</i></p> <p>Որոշումը կայացված է միաձայն:</p>
<p>Հարց 5. Տեղեկատվություն Քեմբրիջի գնահատման կենտրոնից առ այն, թե ինչ ձևաչափով նրանք կարող են համեմատական տվյալներ տրամադրել «Այբ» դպրոցի ԱԲ քննությունների վերաբերյալ:</p>
<p>Հարց 6. Հիմնավորել ուսուցիչների ծանրաբեռնվածության վերաբերյալ թիրախի անիրատեսականությունը (աղյուսակի տեսքով ներկայացնել վերջին երեք տարվա համեմատական տվյալներ՝ ուսուցիչների ծանրաբեռնվածության, առարկայախմբերի դասարանների և աշակերտների թվի համադրությամբ):</p>
<p>Հարց 7. Ցածր առաջադիմություն ունեցող ավագ դպրոցի աշակերտի հետ կատարած աշխատանքների հավաքագրման և ծնողներին աշակերտի խնդիրների ու դպրոցում հետագա ուսումնառության վտանգի մասին ծանուցելու ընթացակարգի վերաբերյալ:</p>
<p>Հարց 8. Ռազմավարական առանցքային (ապագայի վրա էական ազդեցություն ունեցող) կետերի ներկայացում:</p>
<p>Որոշում հարց 8 <i>Որոշվեց 2021-2022 ուստարվա ավագ դպրոց ընդունվող աշակերտների առավելագույն թիվը սահմանել 80 աշակերտ:</i></p> <p>Որոշումը կայացված է միաձայն: Հարցի քննարկմանը և քվեարկմանը չի մասնակցել Անահիտ Ադամյանը:</p>
<p>Հարց 9. Ռազմավարական պլանավորման հանդիպման կազմակերպում Հիս մակարդակով:</p>
<p>Որոշում հարց 9 <i>Որոշվեց ռազմավարական պլանավորման հանդիպումը կազմակերպել ամռանը: Օրը կհստակեցվի տնօրենության կողմից փաստաթղթի թարմացումից հետո:</i></p> <p>Որոշումը կայացված է միաձայն:</p>
<p>Հարց 10. Ներքին ընդունելության հետ կապված հարց:</p>

Կետ 11 Հխ-ի հաջորդ Նիստին առաջարկվող հարցեր:

Բոլոր հարցերը ներկայցնել մայիսի 06-ի Նիստին, եթե այլ բան չի նշված հանձնարարության վերաբերյալ:

Կետ 12. Նիստի ավարտ

Հանդիպումն ավարտվեց ժամը 12:25-ին:

Հետ անդամներ

Անահիտ Ադամյան _____

Անահիտ Հովհաննիսյան _____

Արիս Բերբերյան _____

Արթուր Ալավերդյան _____

Հովհաննես Աթաբեկյան _____

Հակոբ Հակոբյան _____

Սարգիս Բադալյան _____

Վասկեն Յակոբյան _____

Հետ Նախագահ

Ռուբեն Հարությունյան _____

Նիստի քարտուղար

Սիրանուշ Սուքիասյան _____